Անդրանիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1917թ. փետրվար-հոկտեմբեր)

1917թ. ժամանակավոր կառավարության կողմից ձեռնարկված կարևորագույն միջոցառումներից մեկը, որ ամրապնդելու էր պետական իշխանական համակարգն Անդրկովկասում, լինելու էր բարեփոխումների իրականացումը տեղական ինքնակառավարման ոլորտում: Ամբողջ Ռուսաստանի, այդ թվում նաև Անդրկովկասի մասշտաբով տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխման ծրագրի մշակումը օրախնդիր հարց էր դարձել: Հունիսի 1-ին կառավարության որոշմամբ ձևավորվեց աշխատանքային հանձնաժողով, որն իր անդրանիկ նիստում որոշեց ամբողջ թափով ձեռնամուխ լինել տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումների ծրագրի ստեղծմանն ու իրականացմանը՝ չբացառելով նաև Անդրկովկասը վարչատարածքային նոր վերաբաժանման ենթարկելու հրատապ և դժվարագույն խնդիրը:

Ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում փորձում էր ստեղծել տեղական ինքնակառավարման եռաստիճան համակարգ՝ հետևյալ դասակարգմամբ. ա) տեղամաս՝ որպես սկզբնական օղակ, բ) վոլոստ, գ) գավառ: Մինչ 1917թ. հուլիսյան իրադարձությունները, երբ գլխավոր քաղաքական իշխող ուժը կադետներն էին, խնդիր էր դրվում տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման միջոցով մի կողմից լուծել իշխանության կազմակերպման հարցը տեղերում, այդ թվում նաև ազգային ծայրամասերում: Մյուս կողմից՝ այդ համակարգի մեջ ներառնելով նաև ազգային երկրամասերին, հարկավոր էր մեղմացնել իրենց իրավազրկության վերաբերյալ երկրի կենտրոնական իշխանություններին ուղղված վերջիններիս մեղադրանքների ալիքը, խլացնել ազգային-տարածքային ինքնավարության կամ ինքնորոշման իրավունքի նրանց պահանջները:

1917թ. հունիսի 27-ին Կովկասում կառավարման և ինքնակառավարման համակարգի բարեփոխման Բ. Վեսելովսկու գլխավորած հանձնաժողովը՝ բաղկացած Անդրկովկասի հայտնի ազգային-կուսակցական և քաղաքական գործիչներից (Լ. Աթաբեկյան, Գ.Խատիսյան, Ա.Շահխաթունի, Զ. Ավալով-Ավալիշվիլի, Գ. Լորդկիպանիձե, Շ. Էլիավա, Ա. Շեյխուլ Իսլամով, Մ. Խան-Խոյսկի և ուրիշներ) անդրադարձավ երկրամասում ինքնակառավարման նոր համակարգի ներդրման խնդրին: Հանձնաժողովի հանձնարարությամբ հարցը ներկայացրեց փորձագետ Ն. Վինոգրադսկին:[1] Բանախոսի հիմնավորմամբ՝ Անդրկովկասում տեղական ինքնակառավարման և երկրամասի կառավարման արդյունավետ համակարգ ստեղծելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր իրականացնել վարչատարածքային նոր վերաբաժանումներ, քանզի նախկին բաժանումները, անտեսելով էթնիկ գործոնը, ձևավորվել էին արհեստական կերպով՝ հիմնականում պայմանավորված տնտեսական գործոններով: Ուստի Անդրկովկասում տեղական ինքնակառավարման ոլորտում նոր բարեփոխումների հիմքում պետք էր դնել կառավարման եռաստիճան՝ «տեղամաս - վոլոստ - գավառ» գաղափարը, որն առանց վարչատարածքային նոր վերաբաժանման դատապարտված էր ձախողման:

Ըստ Վինոգրադսկու՝ նոր վերաբաժանման ճանապարհին առաջնաքայլը տեղական ինքնակառավարման առաջին օղակը սահմանելն էր, որը առավելագույնս կհամապատասխաներ տարածքի նվազագույն միատարր բնակվածության պայմաններին, տնտեսական և կենցաղային միասնականության պահանջներին: Անդրկովկասի վարչական կառուցվածքը ձևավորելիս ցարիզմը հաշվի չէր առնում բնակչության ազգային կազմը, նրա տնտեսական կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները:[2] Կարևորելով այս չափանիշերը՝ Վինոգրադսկին առաջարկում էր Անդրկովկասում տեղական ինքնակառավարման սկզբնական օղակ ճանաչել վոլոստը՝ գավառակը:

---

[1] *Ռուսաստանի պատմության պետական արխիվ (այսուհետև՝ ՌՊՊԱ), ֆ. 1788, ց. 6, գործ 9, թ. 3:*
[2] *История Азербайджана, т 2, Баку, 1960, стр 154:*

1917թ. հուլիսի 1-2-ին և 8-ին հանձնաժողովի նիստերում շարունակվեցին քննարկվել երկրամասի նահանգների և գավառների սահմանների փոփոխություններ իրականացնելու հարցերը, որոնք բխելու էին նախորդ նիստերում առաջ քաշած պահանջներից: Հանձնաժողովը սկզբում քննարկեց Կովկասյան լեռնականների ներկայացուցիչ Վ. Զարգինի առաջարկությունը, համաձայն որի, Թիֆլիսի նահանգից Թերեքի մարզին պետք է միացվին Դուշեթի ու Գորիի գավառների խառն բնակչության կազմ ունեցող հատվածները, իսկ Քութայիսի նահանգից՝ Ռաճինիի գավառի մի մասը, որը հիմնականում բնակեցված էր կիստինցիներով:[3] Հարկ է նշել, որ, չնայած առաջարկությունը սկզբունքային առարկությունների առիթ չդարձավ, այնուհանդերձ, վրացական կողմը այն մերժեց: Զաքաթալիի օկրուգի հարցում հանձնաժողովը քննարկեց ինչպես նրա տնտեսական, այնպես էլ էթնիկական առկա վիճակը և հանգեց այն եզրակացության, որ նպատակահարմար կլիներ այն միացնել ոչ թե Թիֆլիսի կամ Ելիզավետպոլի նահանգներին, այլ Դաղստանի մարզին, առաջին հերթին բնակչության կազմի և նրա՝ Դաղստանի հետ առավել կապված լինելու հանգամանքով: Սուխումի օկրուգը առաջարկվեց ընդգրկել Քութայիսի նահանգի մեջ, իսկ Բաթումի մարզում՝ սահմանային փոփոխություններ չանել: Առավել սուր քննարկման առարկա դարձավ Ելիզավետպոլի նահանգի սահմանների վերանայման հարցը, որի կապակցությամբ իրենց առաջարկություններն էին ներկայացրել նաև հայերը՝ Ա. Շահխաթունյանի և Գ. Խատիսայի ներկայացրած նախագծով:

Համաձայն այդ փաստաթղթի, Ելիզավետպոլի նահանգը, որն ուներ 38.6 հազար քառ. վերստ տարածք և 1միլիոն 117 հազար ազգաբնակչություն, բաժանվում էր 8 գավառների՝ Ելիզավետպոլի, Նուխիի, Արեշի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշիի, Զանգեզուրի և Կարյագինի: Նահանգում հայերը կազմում էին բնակչության ավելի քան 1/3-ը: Գավառների մեծ մասը բնակեցված էր հիմնականում հայերով, հատկապես նահանգի հարավարևմտյան հատվածը: Մահմեդականներով բնակեցված էր նահանգի հյուսիս-արևելյան մասը, մասնավորաբար, լեռնային հատվածը: Համաձայն առաջարկի՝ Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշիի, Կարյագինի և Զանգեզուրի գավառների միացումից կարելի էր ձևավորել հատուկ նահանգ, քանի որ այն ամբողջովին կհամապատասխաներ նոր վարչատարածքային միավոր ստեղծելու պահանջներին՝ ազգային միատարրություն և միասնական կենցաղային սովորույթներ, իսկ աշխարհագրական սահմանները դրան համահունչ էին:

1. Ձևավորվող լեռնային նահանգի մեջ էին ընդգրկվելու Ղազախի գավառի մի մասը՝ որպես առանձին՝ Քարավան-Սարայի գավառ հետևյալ գյուղական համայնքներով. Ղազախի գավառից՝ Բարանշեքի, Բաշքենդի, Կարախանլիի, Ղուշչիի, Կուլալինի, Թաղլինսկու, Թոռուզ-կալեի, Հին Դիլիջանի, Նոր Դիլիջանի, Կարա-Կոյունլուի, Կոթիքենդի, Աքսիբասարի, Միխայլովկայի, Ճամբարակի, Ուզուն-Թաղայի, Քարավանսարայի, Կարա-Դաշի համայնքները:

2. Գանձակի գավառը պետք է բաղկացած լիներ Ելիզավետպոլի գավառի հետևյալ մասերից. II տեղամասն առանց Փիրիջան գյուղական համայնքի, III տեղամասն առանց Գերանբոյ-Ախմեդլի Զեյվայի և Սինգենչաուրի գյուղական համայնքների, IV տեղամասի մեջ մտնելու էին Ֆրեզնակի գյուղական համայնքները և V տեղամասի մեջ՝ Ելենովկայի, Միխայլովկայի, Զուրնաբաղի, Բայանի, Դումժալինսկի, Զագլիկի, Դաստաֆյուրի, Աղջաքենդի, Բորիսինսկի, Էրքեջի, Չարդախլուի, Ֆրեզովսկու, Գետաբեկի, Սյավյանսկի, Սիեքինլինսկի,Կարա-Սուրադի (Այրում), Նովոսարատովկայի համայնքները և Ելիզավետպոլ քաղաքի աջակողմյան ափը:

3. Շուշիի գավառը պետք է կազմված լիներ Շուշիի նախկին գավառի I տեղամասից՝ առանց Սկորելևի գյուղական համայնքի, Արքադուզ և Ագոգլանսկի տեղամասերից, Արքադուզի գյուղական համայնքից, Ջիվանշիրի գավառի մի մասից և Թալիշյան գյուղական համայնքից ու Զանգեզուրի գավառի մի մասից: II տեղամասի

---

[3] *Կիստինցիները Կովկասյան պատերազմի ընթացքում (XIX դ. 40-ական թթ.) Չեչնիայի լեռնային համայնքներից Թիֆլիսի նահանգ տեղափոխված նախյա-դաղստանյան լեզվախմբին պատկանող լեռնական ժողովուրդ են՝ ազգակից չեչեններին, ինգուշներին, բացրիլցներին (տես Ս. Բրուք, Население мира, М., 1986, стр. 166):*

մեջ մտնելու էին Ջիվանշիր գավառի Կուշչիլար, Մազութլի, Սաֆյան, Մելիք-Փայասի, Բեգիր Բեկլու, Կալանդարինսկի, Հաջի-Սալիմսկի, Շիխովինսկի համայնքները, Կարյագինի գավառի՝ Հաղբաթ, Էդիլլու, Արաքյալ գյուղական համայնքները: Զանգեզուրի գավառը կազմելու էր նշված նահանգի մնացյալ հատվածը:

Հայկական Գանձակ նահանգի վարչական կենտրոն պետք է լիներ Ելիզավետպոլ քաղաքի հայկական մասը՝ Գանձակը: Վարչատարածքային այսպիսի փոփոխությունից հետո Գանձակի նահանգում հայերը կկազմեին 366 հազար, իսկ մահմեդականները՝ 177 հազար մարդ՝ համապատասխանաբար 64,31 և 5%: Գանձակի նահանգը կունենար 4 գավառներ՝ Գանձակի, Շուշիի, Քարավան-Սարայի, Զանգեզուրի:

Ելիզավետպոլի նահանգի մահմեդական հատվածից կազմելու էր առանձին՝ Գյանջայի նահանգը՝ բաղկացած Ղազախի, Ելիզավետպոլի, Արեշի, Նուխու, Բարդայի, Կարյագինի գավառներից՝ հետևյալ էթնիկական կառուցվածքով. մահմեդականներ՝ 620 հազար մարդ, հայեր՝ 53 հազար, այլք՝ 31 հազար:[4]

Ա. Շահխաթունյանի և Գ. Խատիսյանի ներկայացրած փաստաթղթում նշված էին նաև գյուղական մի շարք համայնքներ, որոնք մտնելու էին Գանձակի նահանգի մեջ՝ միայն տնտեսական ու աշխարհագրական գործոններով պայմանավորված: Քանի որ դրանք (Կարախանլիի և Կուշչիի գյուղական համայնքները Ղազախի գավառից, Պոլարինսկի և Կաջարլիի համայնքները Շուշիի գավառից, Թիմուր-Մասկութի, Դոնդուարլինի, Շեխալտենսկի, Խոջագանի, Մոլլա-Բուրանի և Ռուբանակիի գյուղական համայնքները) բնակեցված էին մահմեդականներով, առաջարկվեց, որպեսզի այդ համայնքները ևս մտնեին Ելիզավետպոլի նահանգի մեջ: Դրա հետևանքով Ելիզավետպոլի նահանգի բնակչության կազմը կունենար հետևյալ տեսքը. 663 հազար մարդ կամ 89%-ը՝ մահմեդականներ, 53 հազարը կամ 7%-ը՝ հայեր, 31 հազարը կամ 4%-ը՝ այլք: Գանձակի նահանգը կստանար հետևյալ տեսքը. հայեր՝ 366 հազար մարդ կամ 70%, մահմեդականներ՝ 134 հազար կամ 25%, այլք՝ 28 հազար կամ 5%:[5] Մահմեդական բնակչության ներկայացուցիչներից Մ. Խան-Խոյսկին և Շեյխ ալ Իսլամովը հայտարարեցին, որ քննարկվող հարցի կապակցությամբ իրենք որևէ պաշտոնական տեսակետ հայտնելու իրավասություն չունեն, բայց որպես մասնավոր անձ կողմնակից են նահանգի դաշտավայրային և լեռնային մասերը միմյանցից չանջատելուն,[6] քանի որ դրանք սերտորեն կապված են միմյանց տնտեսապես (արոտավայրեր, ոռոգում, անասնապահություն, քոչվոր մահմեդականներին բնորոշ ապրելակերպ՝ ձմռանը դաշտավայրում, ամռանը՝ լեռներում և այլն): Մահմեդական կողմը միաժամանակ դժգոհություն հայտնեց առ այն, որ թուրք-թաթարներով բնակեցված նահանգում հայերի թիվը, համաձայն հայերի ներկայացրած նախագծի, կազմելու է 53 հազար մարդ, մինչդեռ հայերով բնակեցված Գանձակի նահանգում թուրք-թաթարների թիվը անցնելու էր 134 հազարի սահմանը, ինչը չէր կարելի արդարացի համարել:[7]

Ա. Շահխաթունյանի և Գ. Խատիսյանի առաջարկությամբ՝ Ալեքսանդրապոլի նահանգի կազմի մեջ էին ընդգրկվելու Ալեքսանդրապոլի, Ախալքալակի, Լոռու, Կարսի, Կաղզվանի գավառներն ու օկրուգները՝ բնակչության էթնիկական հետևյալ կազմով.

գավառի անվանումը	ընդամենը (հազար մարդ)	հայ (հազար մարդ)	%	մահմեդական (հազար մարդ)	%	այլ* (հազար մարդ)	%
Ալեքսանդրապոլի	204	160	83	22	11	12	6
Ախալքալակի	120	94	79	10	8	16	13
Լոռու	120	92	77	14	12	14	11
Կարսի	193	83	43	49	25	61	32
Կաղզվանի	82	35	43	26	32	21	23
Ընդամենը	719	474	66	121	17	124	17

[4] ԱՊՊԱ, ֆ. 1778, ցուցակ 6, գործ 9, թ .5:
[5] ԱՊՊԱ, ֆ. 1778, ցուցակ 6, գործ 9, թ .5:
[6] Նույնը:
[7] ԱՊՊԱ, ֆ. 1778, ցուցակ 6, գործ 9, թ .5:
* Ռուսներ, հույներ, քրդեր, եզդիներ և ուրիշներ:

Այսպիսով, Անդրկովկասի երեք հայկական նահանգներում (Երևանի, Ալեքսանդրապոլի և Գանձակի) 2 մլն. 702 հազար բնակչությունից հայեր էին լինելու 1մլն. 767 հազարը (65.4%), մահմեդականներ՝ 757 հազարը (28%), այլք՝ 178 հազարը (6.6%):[8]

Հանձնաժողովը չկարողացավ հաղթահարել քննարկումների ընթացքում ծագած տարաձայնությունները, և արդեն հուլիսի 8-ի նիստին մահմեդական կողմը (Խան Խոյսկի և Շեյխ ալ Իսլամով) չմասնակցեց՝ փաստորեն բոյկոտելով այն:

Հայկական կողմն իր ներկայացրած նախագծում անդրադարձել էր նաև Լոռի-Բորչալու և Ախալքալակի տարածաշրջանները Թիֆլիսի նահանգից անջատելու և այն նորակազմ Ալեքսանդրապոլի նահանգի մեջ ընդգրկելու նպատակահարմարությանը և հանդիպեց վրացական կողմի դիմադրությանն ու առարկություններին:

Անդրկովկասի թուրք-թաթարները որպես վերաբաժանման հիմք առաջարկում էին ճանաչել մինչ Ռուսական կայսրության կազմի մեջ ընդգրկվելը Անդրկովկասի ունեցած նախկին վարչատարածքային սահմանները: Իսկ դա նշանակում էր մի այնպիսի հզոր մահմեդական կազմավորման ստեղծում, որն իր մեջ ներառելու էր 1. Ղուբայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Թալիշի նախկին խանությունները և Մուղանի տափաստանը ապագա Բաքվի նահանգի կազմում, 2. Գյանջայի, Ղարաբաղի, Նախիջևանի նախկին խանությունների տարածքները ապագա Ելիզավետպոլի նահանգի կազմում:

Փաստորեն վրացական և թուրք-թաթարական ծրագրերի իրականացման դեպքում «Հայաստան» հասկացությունը պետք է տարածվեր Երևանի նահանգի միայն Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Երևանի գավառների վրա, ընդ որում, Երևանի գավառի առանձին տեղամասեր էլ դեռևս կարող էին վիճելի համարվել: Փոխհամաձայնության միջոցով երկրամասը վարչատարածքային վերաբաժանման ենթարկելու փորձերը փաստորեն դրական արդյունքի չհանգեցրին: Անդրկովկասյան երեք ազգությունների ներկայացուցիչների միջև հակասությունները այնքան խորացան, որ որոշվեց ժամանակավորապես դադարեցնել քննարկումները, ինչն ըստ էության նշանակում էր դրանք փակուղի մտցնել:

Առանձին հարցեր քննարկումների առարկա դարձան նաև ՕԶԱԿՈՄ-ին կից զեմստվոական խորհրդակցության նիստերում, որտեղ նախագահում էր վրաց մենշևիկների առաջնորդներից մեկը՝ Ա. Չխենկելին: Խորհրդակցության օրակարգի հիմնական հարցը վերաբերում էր տեղական ինքնակառավարում մտցնելուն: Սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ) Ղազար Տեր-Ղազարյանը, խոսելով վարչատարածքային վերաբաժանման ուղղությամբ ծավալած աշխատանքների մասին, նշեց, որ Անդրկովկասի ազգային-կուսակցական ղեկավարության ներկայացուցիչների միջև քննարկվող հարցի կապակցությամբ ոչ թե համընդհանուր, այլ միայն մասնակի համաձայնություն է կայացվել Ելիզավետպոլի նահանգի վերաբաժանման շուրջ՝ նահանգը հայկական և թաթարական մասերի բաժանելու կապակցությամբ:[9] Ղ. Տեր-Ղազարյանի կողմից առաջ էր քաշվել հայկական նահանգների՝ Ալեքսանդրապոլի, Երևանի, Գանձակ-Շուշիի հիման վրա Հայկական մարզի վերաստեղծման գաղափարը:[10]

Վրացիները դեմ էին բացառապես հայերով բնակեցված Ախալքալակի և Բորչալուի գավառները Թիֆլիսի նահանգից անջատելու և Հայկական մարզի մեջ ընդգրկելու գաղափարին՝ դա համարելով այս տարածքներում այլազգիների իրավունքների ոտնահարում, որն Անդրկովկասում կդառնար ազգամիջյան հարաբերությունների սրման պատրվակ: Ա. Չխենկելին հանդես եկավ առաջարկությամբ. մինչև Անդրկովկասյան երեք ազգությունների ներկայացուցիչների միջև վարչատարածքային վերաբաժանման հիմնահարցերի շուրջ կայուն համաձայնություն չկայանա, հարցի քննարկումը չներկայացնել ժամանակավոր կառավարություն և վերջինիս խնդրել միջոցառումներ չձեռնարկել՝ առանց հաշվի առնելու երկրամասի ժողովուրդների ազգային-կուսակցական ղեկավարության կարծիքը: Բոլշևիկյան կուսակցության անունից Ֆ. Սախարաձեն առաջարկեց Անդրկովկասի համար առաջնային խնդիր դիտել տեղական ինքնակառավարում մտցնելն առանց վարչատարածքային վերաբաժանումների,

---

[8] *Նույն տեղում, p. 6:*

[9] *Кавказ, вестник ОЗАКОМА, 14 ноября, 1917, стр. 4.*

[10] *Նույնը:*

իսկ վերջինիս անդրադառնալ հետագայում, որովհետև Անդրկովկասում նախապայմաններ պիտի ստեղծվեն առաջին հերթին հողային հարցի լուծման համար:

Տեղական ինքնակառավարման հարցերի շուրջ երկրորդ խորհրդակցությունում նորից կողմերից յուրաքանչյուրը պնդեց իր տեսակետը, բացառությամբ Ֆ. Մախարաձեի, որն այս անգամ առաջարկեց Անդրկովկասը վարչատարածքային վերաբաժանման ենթարկել հանրաքվեի միջոցով, քանի որ «միայն ժողովուրդն ինքն իրավունք ունի լուծելու վարչատարածքային վերաբաժանման հարցը»:[11] Ի վերջո խորհրդակցությունը, չքննարկելով վարչատարածքային վերաբաժանման խնդիրները, եկավ այն եզրակացության, որ Անդրկովկասում տեղական ինքնակառավարում առաջին հերթին անհրաժեշտ է մտցնել այն վայրերում, որտեղ չկան վիճելի տարածքային հարցեր: Որպես վիճելի տարածքներ առաջարկվում էր ճանաչել. Երևանի նահանգն ամբողջությամբ, Ելիզավետպոլի նահանգն առանց Նուխիի և Արեշի, Կարսի մարզից Կարսի ու Կաղզվանի օկրուգները և Թիֆլիսի նահանգից Բորչալուի ու Ախալքալակի գավառները:[12]

Վերոշարադրյալը ցայտուն կերպով ցույց է տալիս, թե վրացիներն ու կովկասյան թուրք-թաթարները հայկական ծրագրերի իրականացման դեմ ինչպես էին միասնական ճակատ կազմում, և պատահական չէր, որ հայերին զսպելու «լավագույն» տարբերակներից մեկը համարվեց ոչ ավել, ոչ պակաս, Արարատյան դաշտավայրի կենտրոնի՝ պատմական Հայաստանի հարյուրամյակներով ձևավորված բնօրրանը՝ Երևանի նահանգը վիճելի տարածք դիտելը: Երկարատև քննարկումներից հետո խորհրդակցությունն ընդունեց միջանկյալ որոշումներ.

1. «Անդրկովկասում վարչատարածքային սահմանների ընդհանուր Կանոնադրություն» ընդունելը միայն ժամանակավոր կառավարության իրավասությունն է և միայն նրան պետք է վերապահվի երկրամասի վարչատարածքային սահմանների վերաձևման և որոշման կապակցությամբ հատուկ Դեկրետի ընդունման իրավունքը:

2. Տեղական ինքնակառավարում մտցնել այն տեղերում, ուր չկային տարածքային վեճեր, և դրա իրավունքը ևս վերապահել ժամանակավոր կառավարությանը:

3. Վիճելի տարածքներում տեղական ինքնակառավարում մտցնելու նախապայման համարել վարչատարածքային վերաբաժանման իրականացումը:[13]

Որոշվեց Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման ծրագիրը ուղարկել Պետրոգրադ և այնտեղից համապատասխան հանձնարարագրեր ստանալուց հետո միայն ձեռնամուխ լինել դրա իրականացմանը: 1917թ. հունիսի 29-ին ժամանակավոր կառավարության կողմից ձևավորվեց հանձնաժողով, որի նպատակն էր հասնել Անդրկովկասում վերոնշյալ խնդիրների լուծմանը: Հարցերի քննարկումը հանձնաժողովին բերեց այն եզրակացության, որ Անդրկովկասում վարչատարածքային վերաբաժանման հիմքում առաջնահերթորեն պետք է դրվի էթնիկական միատարրության գաղափարը՝ իհարկե, հաշվի առնելով նաև բնական-աշխարհագրական և տնտեսական-կենցաղային պայմանները:

1917թ. ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում իրականացված միջոցառումները, որոնք վերաբերում էին Անդրկովկասում տեղական ինքնակառավարման և վարչատարածքային վերաբաժանման խնդիրներին, որոշակի մտահոգություն և անհանգստություն առաջ բերեցին կենտրոնական իշխանություններում: Այն, որ ժամանակավոր կառավարությունը ձգտում էր վերևից հրահանգվող միջոցառումներով մեղմել ազգամիջյան հարաբերություններում առկա լարված մթնոլորտն Անդրկովկասում, կասկած չէր հարուցում: Բայց, որ որոշակիորեն մեղմացված քաղաքական դաշտի հետևանքով Անդրկովկասյան ժողովուրդների կողմից դրսևորվող քաղաքական ակտիվությունը կարող էր դուրս գալ վերահսկելիության շրջանակներից, սկսեց խստորեն անհանգստացնել Ռուսաստանի՝ իրեն ժողովրդավար համարող կառավարությանը: Մեր համոզմամբ, հենց դա էլ եղավ դրդապատճառներից մեկը, որպեսզի ժամանակավոր կառավարությունը նախաձեռներ «Կովկասում ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիտեի կառավարման մասին կանոնադրության» ընդունումը 1917թ. օգոստոսի 4-ին:

---

[11] *Кавказ, вестник ОЗАКОМА, 14 ноября, 1917, стр. 4.*
[12] *Նույն տեղում, 8/251/10 ноября, 1917.*
[13] *Նույնը:*

Համաձայն այդ փաստաթղթի՝ երկրամասը բաղկացած էր լինելու հետևյալ միավորներից. Թիֆլիսի, Բաքվի, Երևանի, Քութայիսիի, Ելիզավետպոլի նահանգներից, Թերեքի, Դաղստանի, Կարսի, Բաթումի մարզերից և Զաքաթալիի ու Սուխումիի օկրուգներից:

Երկրամասի կառավարիչ էր լինելու Գերագույն Կոմիսարը, որն իր գործունեությամբ ենթարկվելու էր միայն Ժամանակավոր կառավարությանը: Նրան առընթեր՝ Երկրամասի կառավարման նպատակով ստեղծվելու էր Վարչական խորհուրդ:[14] Տեղական ինքնակառավարման համակարգում իրրև գործավարության լեզու էր ճանաչվելու նաև ազգայինը, իսկ ազգամիջյան բնույթի գործառույթների ժամանակ՝ միայն ռուսերենը: Սկզբնական նախագծում չէր նշվում Վարչական խորհրդի կազմի էթնիկական ընդգրկվածության մասին, սակայն հետագայում զգալով, որ դա կարող էր հանգեցնել բարդությունների, կառավարությունը հստակ նշեց, որ խորհուրդը բաղկացած է լինելու հայերից, վրացիներից, կովկասյան թուրք-թաթարներից և լեռնականներից:[15]

Կովկասյան գործերով Գերագույն կոմիսարի առնչությունները կենտրոնական իշխանությունների հետ ապահովելու նպատակով Ժամանակավոր կառավարությունը Պետրոգրադում ստեղծելու էր Կովկասյան գործերով Կոմիսարիատ: Հարկ է նշել, որ Ժամանակավոր կառավարության քաղաքական իշխանության ամիսներին երկրամասի ժողովուրդների ազգային-կուսակցական և քաղաքական շրջանակները Ռուսաստանից անջատվելու և անկախ պետություն հռչակվելու խնդիրներ առաջ չէին քաշում: «Մեր նպատակն է,- նշում էր Լ.Նազարյանը,- հասնել այն բանին, որպեսզի ազատ և ուժեղ պետության ստեղծմամբ նպաստենք եղբայրական միասնականության ստեղծմանը Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների համար»:[16] Ռուսաստանի կենտրոնական իշխանությունների գերնպատակը քաղաքական հավասարակշռությունը (պարիտետը) և կառավարելիությունը Անդրկովկասում ապահովելն էր:

ПРОБЛЕМЫ РЕОРГАНИЗАЦИИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ЗАКАВКАЗЬЕ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ В РОССИИ ВРЕМЕННОГО ПРАВИТЕЛЬСТВА (февраль- октябрь 1917г.)

___ *Резюме* ___ ___ *А. Геворгян* ___

Предпринятые Временным правительством России меры по проведению реформы в области местного самоуправления с целью реорганизации системы местной власти в Закавказье являлись важнейшими политическими мероприятиями (решение Временного правительства от 1-го июня 1917г.) Кавказа и имели важное значение для выработки основных положений реформы. Проект реформы по самоуправлению и управлению Кавказа не исключал вопрос об административном переделе края. Комиссия по выработке комплексной программы реорганизации местного самоуправления в Закавказье считала желательной и целесообразной изменение административных границ края на этнической основе, на что Совещание при министре внутренних дел Россия откликнулось положительно.

В 1917г. влиятельные национально-политические круги Закавказья в своих предложениях по вопросу об административном переделе Закавказья выступали совершенно с противоположных позиций. Политический максимализм каждой стороны сделал невозможным достижение компромисса в области урегулирования межэтнических отношений, что и в дальнейшем стало причиной развязки военных конфликтов в Закавказье.

---

[14] *Кавказ,вестник ОЗАКОМА, 8/251/10 ноября, 1917, 4.*
[15] *Նույն տեղում, p 35*
[16] *ՌՊՊԱ, ֆ. 3529, ցուցակ 1, գործ 4, p. 1:*